ՀԱՅՈՑ ՍՄԲԱՏ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ԱԲԽԱԶԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա. Ս.

Հայոց Սմբատ Ա արքայի (890-914) թագավորության ժամանակաշրջանի պատմության մեջ կարևոր տեղ ունի աբխազական արշավանքը, որի մանրակրկիտ քննությամբ, որքան մեզ է հայտնի, դեռևս որևէ հետազոտող չի զբաղվել: Մինչդեռ այդ արշավանքի ուսումնասիրությունը և դրա թվագրումը կարող են հստակ պատկերացում տալ X դ. սկզբին հայ Բագրատունիների տերության հզորության, ընդգրկած տարածքի և վարչաքաղաքական բաժանման մասին:

Սկզբնաղբյուրների տեղեկությունները ցույց են տալիս, որ աբխազական թագավորությունը հայ Բագրատունիների գերիշխանությունն ընդունել էր դեռևս Աշոտ Ա Բագրատունու օրոք (Արմինիա ոստիկանության իշխանաց իշխան՝ 862-885 թթ., հայոց թագավոր՝ 885-890 թթ.): Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Աշոտ Ա-ն «զթագաւորն Եգերացւոց ի սէր միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմաբար պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»[1]:

Արդ, անդրադառնանք Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, որը Սմբատ Ա-ի ժամանակակիցն էր, աբխազական արշավանքը տեղի է ունեցել հետևյալ ժամանակագրական հերթականությամբ: 901 թ. Ատրպատականի ամիրա է դառնում Յուսուփ Սաջյանը: 903 թ. նա արշավում է Հայաստան, սակայն մեծ բանակով նրան ընդառաջ է գնում Սմբատ Ա-ն: Դա Յուսուփին ստիպում է հաշտվել հայոց թագավորի հետ: Դրանից հետո տեղի է ունենում Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը, որից հետո էլ արաբական խալիֆան Սմբատին Ա-ին հրավիրում է մասնակցելու Յուսուփի դեմ պատժիչ արշավանքին, այնուհետև Գագիկ Արծրունին խնդրում է Սմբատ Ա-ին՝ Նախճավանը հանձնել իրեն, իսկ ավելի ուշ՝ 908 թ., Գագիկ Արծրունին թագ է ստանում Յուսուփից[2]: Ինչ վերաբերում է աբխազական արշավանքին, ապա Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ աբխազական զորքերը ներխուժում են Վիրք, Ծանարք և Գուգարք: Քանի որ այդ տարածքներին տիրում էր Հայոց թագավոր Սմբատ Ա-ն, Վրաց (իմա՛ Կղարջքի)[3] թագավոր Ատրներսեհն աբխազական թագավոր Կոնստանդին Գ-ին (893-929) զգուշացնում է այդ քայլից: Սակայն աբխազական թագավորը շարունակում է առաջխաղացումը, որին հետևում է Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը: Աբխա

---

[1] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** *Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 142:*

[2] *Նույն տեղում, էջ 196-214:*

[3] **Ադոնց Ն.,** *Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 122:*

զական զորքերը պարտություն են կրում, իսկ Կոստանդին Գ-ն գերվում է Կղարջքի Ատրներսեհ թագավորի կողմից ու հանձնվում Սմբատ Ա-ին: Այնուհետև հայկական զորքերը նվաճում են աբխազական թագավորությունը: Մասնավորապես գրավում են Փոյթի շրջանը՝ Գուրիան («Վուրի աշխարհ»): Սմբատ Ա-ն այնտեղ կուսակալներ է կարգում: Որոշ ժամանակ անց Կոստանդին Գ-ն ընդունում է Սմբատ Ա-ի գերիշխանությունն ու ազատ է արձակվում[4]:

Ըստ այս դեպքերի ժամանակակից կարծեցյալ Շապուհ Բագրատունու՝ Սմբատ Ա-ն աբխազական Դատոս[5] (իմա՛ Կոստանդին Գ) թագավորի դստերը կնության է բերում իր որդի Մուշեղին և դրանից հետո տիրում է աբխազական թագավորության մեջ մտնող Կանգարք, Գոգշեն, Ձայլցեղ, Կող և Արտահան գավառներին: Այդ պատճառով աբխազական թագավորը ձերբակալում է Մուշեղին, իսկ Սմբատ Ա-ի զորքերը ներխուժում են աբխազական թագավորություն («Նավհանաց աշխարհ») և հասնում Գորի քաղաքին, որտեղ գտնվում էր Դատոսը Մուշեղի հետ: Աբխազական թագավորը բանակցությունների ժամանակ գերվում է, ազատում Մուշեղին և Սըմբատ Ա-ին զիջում Կանգարքը, Գոգշենն ու Կողը: Բացի այդ, ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, ըստ որի՝ Կոստանդին Գ-ին գերել է Կղարջքի (Վրաց կոչված) թագավոր Ատրներսեհ Բագրատունին, ըստ կարծեցյալ Շապուհ Բագրատունու՝ այդ արել է Վասպուրականի Գուրգեն իշխանը[6]: Մեր կարծիքով, Կղարջքի թագավորի չնչին դերակատարությունն է պատճառը, որ կարծեցյալ Շապուհ Բագրատունին նրան պարզապես չի հիշատակում:

Վերոհիշյալ տեղեկությունը, որքան էլ հակասական է, պարունակում է կարևոր իրողություններ: Այն, որ ըստ կարծեցյալ Շապուհ Բագրատունու՝ աբխազական թագավորը գրավել էր Գուգարքի որոշ գավառներ, ինչպես նաև Գորին, որը (գտնվում էր կենտրոնական Վիրքում) արդեն գրավել էր Սմբատ Ա-ն, հաստատում է Հովհան-նես Դրասխանակերտցու վերոհիշյալ վկայությունը: Մյուս կողմից, պարզվում է, որ Կոնստանդինը տիրել էր նաև Կղարջքի Ատրներսեհի թագավորին պատկանող որոշ գավառների, որը ստիպել է Ատրներսեհին օգնության կանչելու իր տիրակալ Սմբատ Ա Տիեզերակալին: Խնդրո առարկա իրադարձությունների վերաբերյալ կարևոր տեղե-կություններ է հաղորդում նաև «Վրաց տարեգրություն»-ը, ըստ որի՝ Կոստանդինն արշավում է Վիրք և նվաճում այն: Սմբատ Տիեզերակալն արշավանքի է ելնում, վերստին նվաճում Վիրքը, պաշարում կարևոր նշանակություն ունեցող Ուփլիսցխե ամրոցը, գրավում գրոհով և ներխուժում աբխազական թագավորություն: Դրա-

---

[4] *Նույն տեղում, էջ 202-204:*

[5] *Կարծեցյալ Շապուհ Բագրատունին շփոթում է Հայոց Սմբատ Ա և Աբաս թագավորների դեմ պատերազմած աբխազական Կոստանդին և Դատոս կամ Թեոտաս թագավորներին [տե՛ս Պատմութիւն* **Շապհոյ Բագրատունւոյ** *(այսուհետև՝ Շապուհ Բագրատունի), ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 81-83, Հաւաքումն պատմութեան* **Վարդանայ վարդապետի** *(այսուհետև՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 97-98]:*

[6] **Շապուհ Բագրատունի,** *էջ 81-83:*

նից հետո երկու թագավորները հաշտվում են, Կոստանդինն ընդունում է Սմբատ Ա-ի գերիշխանությունն ու հետ ստանում Ուփլիսցխեն[7]: Ըստ Ջվանշեր պատմիչի՝ Սմբատ Ա-ն պատերազմեց Կոստանդնի դեմ և «էառ զՔարթլ և զՈւփլիսցխե. և դարձեալ հաշտեալ՝ խնամիք եղեն[8], և դարձոյց անդրէն»[9]:

Աշխարհագրական առումով Կոնստանդին Գ-ի արշավանքը ներառում էր Կղարջքի թագավորությունը, Կենտրոնական Վիրքը (Շիդա Քարթլի), Գուգարքի որոշ գավառներ և Ալանաց դուռը՝ շրջակա ցեղերով:

Ամփոփենք. աբխազական կամ եգերաց Կոստանդին Գ թագավորը արշավանք է կատարում դեպի Կղարջքի թագավորություն, Ալանաց դուռ և Վիրք, որոնք նախապես արդեն նվաճել էր Սմբատ Ա-ն: Կղարջքի թագավոր Ատրներսեհը զգուշացնում է նրան այդ քայլից, բայց ապարդյուն: Սմբատ Ա-ն, իր հետ վերցնելով Ատրներսեհին և իր նախարարներին, մեծ բանակով արշավում է Կոստանդնի դեմ, որը ստիպված հաշտություն է խնդրում, բայց բանակցությունների ժամանակ գերվում է և բերվում հայոց թագավորի մոտ: Այնուհետև հայկական զորքը, հետ նվաճելով Կղարջքի թագավորության շրջանները և Վիրքը, ներխուժում է աբխազական թագավորություն և նվաճում այն: Հայոց թագավորը տեղերում կուսակալներ է կարգում: Չորս ամիս անց, երբ աբխազները ցանկանում են նոր թագավոր ընտրել, Սմբատ Ա-ն օգնական զորքով Կոստանդին Գ-ին ուղարկում է աբխազական թագավորություն:

Հայ պատմիչները հաղորդումներ են պահպանել այն մասին, որ Վիրքը, Աղվանքը, Ծանարքը և կովկասյան լեռնական ցեղերին նվաճել էր դեռևս Աշոտ Ա-ն[10]: Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ, բազմելով հայոց գահին, Սմբատ Ա-ն «ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եգերացւոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և ցԾանարս մինչև ցԴուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի ի՝ հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի՝ քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ի՝ քաղաքն Հունարակերտ և մինչև ի՝ Տուս և ի՝ Շամքոր: Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ, որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»[11]: Իսկ

---

[7] *Матиане Картлиса, перевод, введение и примечания Лордкипанидзе М., Тбилиси, 1976, с. 32.*

[8] *Խոսքն այն մասին է, որ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Սմբատ Ա-ի հպատակներից Կղարջքի թագավոր Ատրներսեհ Բագրատունին Կոստանդին Գ-ի աներն էր:*

[9] **Ջուանշէրի** *պատմչի համառօտ պատմութիւն Վրաց, Վենետիկ, 1884, էջ 106:*

[10] **Հովհաննես Դրասխանակերտցի**, *էջ 142,* **Թովմա Արծրունի** *և* **Անանուն**, *Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), բնագիրը՝ Վ. Վարդանյանի, Ե., 1985, էջ 322,* **Վարդան վարդապետ,** *էջ 91:*

[11] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 164:*

կարծեցյալ Շապուհ Բագրատունին հաղորդում է, որ «թագաւորեաց տանն Հայոց Սըմպատ, որդի Աշոտոյ: Եւ էր նայ այր զոռոզ և պատերազմող և առատամիտ: Եւ աջողեցաւ ճանապարհ թագաւորութեանն նորայ:…Եւ նայ տիրեաց ամենայն աշխարհին Հայոց և ընդ ձեռամբ էած զՀայք և զՏայք, զՎիրք և զԱղվանք և զՎրաց դաշտ…: Եւ առեալ տիրեաց նմայ զՓայտակարանն, որ է Տփխիս…: Եւ մեծամտեցաւ և անուանեաց զինքն Սըմպատ տիեզերակալ...Սըմպատ Հայոց և Վրաց թագաւոր և տիեզերակալ, բազում գաւառաց ինքնակալ»[12]: Այսինքն՝ Սմբատ Ա-ի թագավորության սկզբում հայոց տերությունն ընդգրկում էր Մեծ Հայքի և Այսրկովկասի մեծագույն մասը:

Այժմ, երբ արդեն որոշակի պատկերացում ունենք IX դ. վերջին հայոց տերության ընդգրկած տարածքի մասին, տեսնենք, թե ինչ սահմաններ ուներ հայոց տերությունը Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի ժամանակ: Կարծեցյալ Շապուհ Բագրատունին անչափ կարևոր մի տեղեկություն է տալիս այն մասին, թե ովքեր էին մասնակցում Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին: Դրանից կարելի է բխեցնել Սմբատ Ա-ի տերության կազմի և վարչաքաղաքական բաժանման որոշ կարևոր առանձնահատկություններ: Պատմիչը արշավանքի մասնակիցների թվում հանվանե հիշատակում է Արևելից իշխան Սմբատին, Փառիսոսի իշխան Հմայակին, Աղձնիքի իշ-խան Գրիգորին, Գոռոզի իշխան Վասակին, Վայոց ձորի իշխան Ապուշամբին, Տայոց իշխան Գոռամին, Ճողբաց իշխանին, Տարոնի իշխան Գագիկին, Վասպուրականի իշխան Գուրգենին, Մոկաց իշխան Աշոտին, Անձևացյաց իշխան Համակարին, Կորդվաց իշխանին և հայոց թագավորության մեջ գտնվող արաբական ամիրայություններին (ըստ պատմիչի՝ «յաշխարհէն Պարսից այլք բազումք»): Ըստ որում՝ Գուրգեն Արծրունու հետ արշավանքին մասնակցումէին նաև Գնունի իշխաններ[13]: Վերջիններս դեռևս Աշոտ Մսակերի (հայոց իշխան՝ 890-926 թթ.) կողմից վերաբնակեցվել էին Տայքում[14], սակայն դատելով Թովմա Արծրունու հաղորդումներից՝ նրանց որոշ ներկայացուցիչներ մնացել էին Վասպուրականում[15]: Գնունիներից բացի, Վասպուրականի Գուրգեն իշխանի հետ եկել էին նաև Քաջբերունի, Գաբեղենից, Ձյունական, Գազրիկյան և Գնթունի տոհմերի իշխաններ[16]: Քարտեզագրելով այս անվանացանկի նախարարների և իշխանների տիրույթները՝ տեսնում ենք, որ Սմբատ Ա-ի տերության կազմի մեջ մտնող թագավորություններից և իշխանություններից արշավանքին չեն մասնակցել Սյունիքի (Սիսականի) իշխանության, Կախեթի քորեպիսկոպոսության և «Աղվանից» թագավորության զորքերը: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Կոստանդին Գ-ի արշավանքի թիրախներից մեկը հենց Կախեթի քորեպիսկոպոսությունն էր, ավելի հստակ, վերջինիս՝ Ալանաց դուռն ընդգրկող շրջա

---

[12] **Շապուհ Բագրատունի,** *էջ 65-67:*
[13] *Նույն տեղում, էջ 82-83:*
[14] **Վարդան Վարդապետ,** *էջ 83:*
[15] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 230:*
[16] **Շապուհ Բագրատունի,** *էջ 81:*

նը, այսինքն՝ բուն Ծանարքը: Արշավանքին Կախեթի ուժերի չըմասնակցելու պատճառ կարելի է համարել այն, որ այդ քորեպիսկոպոսությունը կամ, որ ավելի հավանական է, դրա՝ Ալանաց դռներին հարևան հատվածը, նվաճել էր աբխազական թագավորը:

Ինչ վերաբերում է անվանացանկում Սյունյաց Աշոտ իշխանի (մահ. 908 թ.[17]) անվան բացակայությանը, ապա, մեր համոզմամբ, պատճառը կարող է մեկը լինել: Քանի որ Սյունիքի իշխաններից արշավանքին մասնակցում էր Վայոց ձորի Ապուշամբ իշխանը, ապա Սյունյաց Աշոտ իշխանի մասնակցությունը ևս այդ հեռավոր արշավանքին հարվածի տակ կդներ հայոց թագավորության հարավային սահմանների անվտանգությունը: Սմբատ Ա-ի կողմից պարզապես անհեռատեսություն կլիներ թիկունքում ունենալով Մոսուլի և Ատրպատականի ամիրայությունների նման թշնամիների՝ բոլոր ուժերը նետել աբխազական ճակատ: Նույնը կարող ենք ասել նաև Վասպուրականի գահերեց իշխան Գագիկ Արծրունու վերաբերյալ:

Անդրադառնալով Աղվանից թագավոր Համամի (մահ. մոտ 910 թ.[18]) բացակայությանը այդ արշավանքին՝ նշենք, որ դա առավել քան տարօրինակ է մի հույժ կարևոր փաստի պատճառով: Ըստ կարծեցյալ Շապուհ Բագրատունու՝ աբխազական արշավանքին մասնակցում էր «Ճողբաց իշխանը»: Ճողբքը (կամ Ճիղբքը) տեղադրվում է Լփինքից հյուսիս (Լփինքը տարածվում էր Կուր և Երասխ գետերի միախառնման վայրից մինչև Շամախի քաղաքի շրջանը[19]) Փիրսաղաթ գետի վերին հոսանքի ավազանում՝ Կապաղակից արևելք[20]: Այդ իրողությունը ցույց է տալիս, որ Հայ Բագրատունիների տերության մեջ էր մտնում նաև Ճիղբքը, որը, ինչպես կտեսնենք, պետք է մաս կազմեր հայոց տերության «Արևելից» կոչվող իշխանության: Ուստի, եթե աբխազական արշավանքին մասնակցել է Ճիղբքի իշխանը, ապա Համամի բացակայությունը պետք է իր պատճառն ունենա: Մեր կարծիքով, անվանացանկում հիշատակվող «Արևելից իշխան Սմբատը» հենց նրա ներկայացուցիչն էր: Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա արքայի օրոք Համամին անվանում է «մեծ իշխանն Արևելից Համամ», որը հայոց թագավորի հրամանով գնում է բանակցելու արաբների հետ՝ հայոց կաթողիկոսին գերությունից ազատելու նպատակով[21]: Այսինքն՝ կարելի է բխեցնել, որ «Արևելից» էր կոչվում հենց Աղվանից թագավորութ-

---

[17] *Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ Յուսուփի 909 թ. արշավանքը տեղի է ունեցել Աշոտ Սյունու մահվան հաջորդ տարին (տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ* **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց** *(այսուհետև՝ Ստեփաննոս Օրբելյան), Թիֆլիս, 1910, էջ 184-185): Յուսուփի այդ արշավանքի թվագրման հարցում կան տարակարծություններ, որոնց անդրադառնալը դուրս է մեր քննության շրջանակից:*

[18] *Համամի որդի Ատներսեհը սկսել է իշխել 910 թվականից (***Ուլուբաբյան Բ.,** *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 82):*

[19] **Հարությունյան Բ.,** *Լփինքի տեղադրության հարցի շուրջ (Բանբեր Երևանի համալսարանի, 1981, N 1, էջ 123):*

[20] **Հարությունյան Բ.,** *Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Ե., 2001:*

[21] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 174:*

յունը: Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, որ Սմբատ անունով Առանշահիկ մի իշխան IX դ. երկրորդ կեսին սպանել է Գրիգոր Առանշահիկի (որին սխալմամբ նույնացնում են Աղվանից թագավորության «հիմնադիր» Համամի հետ[22]) ավագ որդի Ապուլիին[23]: Սըմբատ Առանշահիկին Բ. Ուլուբաբյանը համարում է Գրիգորի որդին և Ապուլիի եղբայրը և նրա մահը դնում 897/898 թ.[24], չնայած Մովսես Կաղանկատվացու «Գրիգորի...երէց որդին Ապուլի սպանանի յազգակցէն Սմբատայ» տեղեկությունը բոլորովին էլ դրա օգտին չի խոսում, քանի որ այդ պարագայում պատմիչը պարզապես կասեր, որ Ապուլին սպանվել է իր եղբոր կողմից և ոչ թե ազգակցի (իմա՛ տոհմակցի): Բ. Ուլուբաբյանի կողմից Սմբատ Առանշահիկի մահ-վան թվագրումը 897/898-ով ևս անհիմն է, քանի որ դրա մասին սկզբնաղբյուրները որևէ հիշատակություն չեն պահպանել: Կարծում ենք՝ կարծեցյալ Շապուհ Բագրատունու հիշատակած «Արևելից իշխան Սմբատը» նույնական է վերոհիշյալ Սմբատ Առանշահիկին: Անգամ եթե սխալ է մեր նույնացումը, այնուամենայնիվ, ինչպես տեսանք, «Արևելից» անունով սկզբնաղբյուրները նշում են հենց Աղվանից թագավորությունը, որից էլ բխում է, որ «Արևելից իշխան Սմբատը» ներկայացնում էր Աղվանից թագավորությունը: Աբխազական արշավանքին Համամի չմասնակցելը պետք է բացատրել այն բանով, որ հայ Բագրատունիների տերության «Արևելից» մեծ իշխան Համամը, գտնվելով Կովկասյան ցեղերի և Շիրվանշահերի վըտանգի ներքո, իր իշխանությունից բացակայել չէր կարող: Իսկ այն, որ Աղվանից թագավորությունը հայոց մեջ կոչվում էր «Արևելից», ապացուցում է Հովհաննես կաթողիկոսի այն վկայությունը, որ ինքը հալածական «'ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ»[25]: Իսկ Մովսես Կաղանկատվացին տեղեկացնում է, որ Միհրանյանները ազգակցական կապ էին հաստատել Առանշահիկների հետ և «պատուաստութեամբս այսուիկ առ ի զոյգ ունել զպետութիւն արևելեայց կողմանցս Աղուանից»[26]:

Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին մասնակցում էին նաև Հայոց Արևելից կողմերի բոլոր իշխանները, Գուրգեն Արծրունու հետ ներկայացել էր նաև Մոկաց Աշոտ իշխանը, առանձին զորախմբերով՝ Անձևացյաց և Տայքի իշխանները, ինչպես նաև հայոց տերության կազմում գտնվող ամիրայությունների զորաջոկատները:

Հատուկ ուշադրության է արժանի նաև Տարոնի իշխանությունը: Չնայած 898 թ. Թուղխի ճակատամարտում Սմբատ Ա-ի կրած պար-

---

[22] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 75-77:*

[23] **Մովսէս Կաղանկատուացի,** *Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Մովսես Կաղանկատվացի), քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 341:*

[24] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 77, 82 և այլն:*

[25] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 220:*

[26] **Մովսես Կաղանկատվացի,** *էջ 338:*

տությանը և Տարոնի կորստին[27], հայոց արքային հետագայում հաջողվել է կրկին իր տերության մեջ մտցնել Տարոնի իշխանությունը՝ վերջինիս մեջ մտնող թե՛ Աղձնիքի և թե՛ Տուրուբերանի գավառներով, որի հետևանքով աբխազական արշավանքին մասնակցում էին Տարոնի իշխանության երկու հատվածների տերերը՝ Աղձնիքի իշխան Գրիգորը և Տարոնի իշխան Գագիկը: Հայտնի է, որ 898 թ. Տարոնի իշխան էր դարձել Գրիգոր Բագրատունին[28]: Մեր քննության շրջանակից դուրս է Գրիգորի ինքնության պարզաբանումը, սակայն կարևոր է կարծեցյալ Շապուհ Բագրատունու հիշատակության մեջ Գրիգորին վերագրվող «Աղձնիքի իշխան» անվան մեկնաբանումը: Այդ անունը, մեր կարծիքով, ոչ այլ ինչ է, եթե ոչ Տարոնի իշխանության մեջ մտնող Աղձնիքի գավառների ընդհանրության հիշատակությունը: Կարծում ենք՝ Գագիկին, որն անհայտ է մյուս հայ պատմիչներին, տրվող «Տարոնի իշխան» անունը վերաբերում է Տարոնի իշխանության մնացյալ հատվածին: Գրիգորի մասին որոշակի տեղեկություններ է պահպանել Կոստանդին Ծիրանածինը՝ նրան անվանելով «Գրիգոր Տարոնացի»[29]:

Գրիգորի Ապոգանեմ անունով եղբայրը տիրույթներ ուներ Տարոնի իշխանության մեջ, որը Կոստանդին Ծիրանածինը անվանում է «Ապոգանեմի երկիր կամ պատրիկ Թոռնիկի բաժին», որը Ապոգանեմի որդի Թոռնիկը որոշեց հանձնել կայսրությանը: Գրիգոր իշխանի որդիները կայսերն առաջարկեցին վերցնել Ուլնուտը (Եղնուտ կամ Եղանց բերդ)՝ շրջակայքով, Թոռնիկի երկրի փոխարեն: Կայսրն ընդառաջեց և վերցրեց Եղնուտը՝ ողջ շրջակայքով: Այնուհետև կայսր-պատմիչն ավելացնում է, որ Տարոնի երկիրը բաժանվեց երկու մասի: Մի մասը գտնվում էր Գրիգորի որդիների, իսկ մյուս մասը՝ Ապոգանեմի որդիների ձեռքում[30]:

Եթե համադրենք կարծեցյալ Շապուհ Բագրատունու և Կոստանդին Ծիրանածինի հաղորդումները, ապա, որպես Տարոնի Գրիգոր իշխանի ժամանակակիցներ, վերոհիշյալ պատմիչներից առաջինը հիշատակում է Գագիկ իշխանին, իսկ երկրորդը՝ Ապոգանեմին: Մյուս կողմից, եթե ըստ Շապուհ Բագրատունու, Տարոնի իշխանը Գագիկն էր, ապա ըստ Կոստանդին Ծիրանածինի՝ Գրիգորը: Ակնհայտ է, որ Ապոգանեմ անունը արաբական Աբու Ղանըմ անվան աղավաղումն է: Բագրատունի իշխանը, մեր համոզմամբ, ունենալու էր նաև հայկական անուն: Կարծում ենք, որ այն Շապուհ Բագրատունու հիշատակած Գագիկն է: «Տարոնացի» կոչված Գրիգորը, փաստորեն, «Աղձնեց», այսինքն՝ Տարոնի իշխանության մեջ մտնող Աղձնիքի հողերի իշխանն էր, իսկ Տարոնին տիրում էր Գագիկ-Ապոգանեմը: Այն, որ Ապոգանեմի տիրույթները գտնվում էին Տա-

---

[27] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 366-368,* **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 176-178:*

[28] **Կոստանդին Ծիրանածին** *(տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1970, էջ 5),* **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 176:*

[29] **Կոստանդին Ծիրանածին,** *էջ 4-5:*

[30] *Նույն տեղում, էջ 6-10:*

րոն գավառում և հարակից շրջաններում, պարզ է դառնում թեկուզ Կոստանդին Ծիրանածինի այն հաղորդումից, որ հենց Թոռնիկն իր տիրույթները կտակեց կայսրությանը, Գրիգորի որդիները կայսերն առաջարկեցին վերցնել ոչ թե Թոռնիկի երկիրը, այլ Ուլնուտը՝ շրջակայքով: Այսինքն՝ նրանք չէին ցանկանում, որ Տարոնի իշխանության սիրտը՝ Տարոն գավառն անցներ կայսրության գերիշխանության տակ: Սակայն, կարծում ենք՝ Գրիգորին Ծիրանածինի կողմից տրվող «Տարոնացի» անվանումը կարող էր ունենալ երկու պատճառ: Առաջին՝ Գրիգորին էր պատկանում գերագահությունը Տարոնի իշխանության մեջ և երկրորդ՝ նա տիրում էր Տարոն գավառի մի մասին: Այս պարագայում, ամենայն հավանականությամբ, երկու պատճառն էլ իրենց ազդեցությունն են թողել: Տարոնի գահերեց Գրիգոր Բագրատունին տիրելու էր Տարոնի իշխանության մեջ մտնող Աղձնիքի հողերին և Աղձնիքին հարակից Տուրուբերանի Ասպակունյաց ձոր և Խոյթ կամ Խութ գավառներին, ինչպես նաև Տարոնի հարավային հատվածին՝ Մուշ քաղաքով, որտեղ էլ գտնվելու էր իշխանանիստը: Ըստ որում, Ուլնուտը, որ նույնական է Տուրուբերանի Արշամունիք կամ Աշմունիք գավառի հարավ-արևմուտքում գտնվող Եղանց բերդին կամ Եղնուտին[31], սահմանակցում էր Տարոնին, այսինքն՝ եղբայրներին հաջողվել էր կայսերը զիջելով Տարոնի իշխանության մեջ մտնող Արշամունիքի տարածքները՝ իշխանության սահմաններում պահել Տարոն գավառն ամբողջությամբ:

Վերևում տեսանք, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին մասնակցում էին դեռևս Աշոտ Ա-ի ժամանակներից հայոց թագավորության կազմի մեջ գտնվող բոլոր երկրների զինական ուժերը: Փաստորեն, Վասպուրականի, Սյունիքի և Արևելից («Աղվանից») իշխանությունները հայոց տերության համակարգում ձեռք էին բերել ընդգծված կուսակալությունների բնույթ, քանի որ սահմանակցում էին հայոց տերության վտանգավոր հարևանների հետ:

Նման մեծ արշավանք Սմբատ Ա-ն կազմակերպել էր նաև 898 թ. Շայբանիների ամիրայության դեմ, որի նպատակը Տարոնը նրա գերիշխանությունից ազատելն էր և, ինչպես կարծեցյալ Շապուհ Բագրատունու և Մովսես Կաղանկատվացու հաղորդումներն են ցույց տալիս, հայոց տերության սահմանների ընդլայնումը հարավից սահմանակից Շայբանիների ամիրայության հաշվին[32]:

Աբխազական արշավանքը ձեռնարկելիս Սմբատ Ա-ն լավ էր հասկանում, որ գործ ունի հզոր ախոյանի հետ, և, չնայած դեռևս Աշոտ Ա-ի ժամանակներից աբխազական թագավորներն ընդունել էին հայոց թագավորի գերիշխանությունը, սակայն նրանց աճող հզորութ-

---

[31] **Երեմյան Ս.,** *Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, Ե., 1976:*

[32] *«Սրմպատ էառ աշխարհն Ղլաթայ և շինեց ինքն բերդ և կամեցաւ ձգել զձեռքն իւր ի Միջագետս Ասորոց», Շայբանի ամիրան Սմբատին մեղադրում է, թե նա կամենում է «ի Միջագետս անցանել ի աշխարհն Բաբելացոց« (Շապուհ Բագրատունի, էջ 72), «Թագաւորն Հայոց Սմբատ...անցանէ ասպատակաւ յաշխարհն Ասորեստանեայց, անդ ի դիմի հարկանին նմա զօրքն Տաճկաց, և փախստեամբ դարձուցանեն ի Հայս»(***Մովսես Կաղանկատվացի****, էջ 336):*

յունը թույլ էր տալիս ձերբազատվել հայկական գերիշխանությունից և, դեռ ավելին, մարտահրավեր նետել հայոց թագավորին՝ նվաճելով նրա հողերի մի մասը: Ինչպես տեսանք, աբխազական թագավորն ի սկզբանե հասկացավ, որ ապարդյուն է Սմբատ Ա-ի հսկա բանակի դեմ պայքարելը, և իր զորքերին հրամայեց ամրանալ բերդերում, որոնք շուտով գրավեցին հայկական զորքերը:

Դատելով սկզբնաղբյուրների հիշատակություններից՝ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը պետք է տեղի ունեցած լիներ կամ Աղստև գետի հովտով և Տփղիսի վրայով, որից այն կողմ անցներ Ուփլիսցխե-Գորի-Սուրամ-Շորապան-Քութայիս ճանապարհով, այնտեղից էլ շարժվեր աբխազական թագավորության խորքերը կամ Սամշուլդե-Տփղիս, այնուհետև առաջին ճանապարհի ուղեգծով և (կամ) Երազգավորս-Ախալքալաք-Ախալցխե-Սուրամ-Գորի- Ուփլիսցրխե ճանապարհով, իսկ հետո՝ Սուրամ-Շորապան-Քութայիս-աբխազական թագավորության խորքեր գծով: Վերը կատարված քննությունը մեզ այն համոզմանն է բերում, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի է ունեցել երրորդ ճանապարհով, այսինքն՝ ինչպես Հովհաննես Դրասխանակերտցու վկայության տրամաբանությունից է բխում, Սմբատ Ա-ն սկզբում օգնության է հասել Ատբրներսեհ Բագրատունուն, իսկ այնուհետև նրան իր հետ վերցրած՝ արշավել Գորի և Ուփլիսցխե: Գերելով աբխազական թագավորին՝ Սմբատ Ա-ն իր զորքերը մտցրել է նրա թագավորության բուն տարածքը և նվաճել այն: Այստեղից էլ բխում է, որ նշված արշավանքի սկզբում Սմբատ Ա-ի զորքի հավաքատեղին, ամենայն հավանականությամբ, եղել է Երազգավորսը:

Անդրադառնանք նաև Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի թվագրմանը: Ըստ պատմիչների՝ այն տեղի է ունեցել Ատրպատականի Յուսուփ ամիրայի 903 թ. արշավանքից հետո, երբ Սմբատ Ա-ն և Յուսուփն առանց արյունահեղության հաշտվեցին[33]: Ինչպես տեսանք, աբխազական արշավանքին մասնակցում էր Վասպուրականի Գուրգեն իշխանը, որը արշավանքից վերադարձավ և արդյունքների մասին զեկուցեց իր գահերեց եղբայր Գագիկին[34]: Այսինքն՝ աբխազական արշավանքի ժամանակ Վասպուրականի գահերեց իշխան Աշոտ Արծրունին արդեն մահացել էր: Վասպուրականի Արծրունյաց թագավորության պատմության ուսումնասիրողներից Վ. Վարդանյանն Աշոտի մահը դնում է 904 թ. նոյեմբերի 13-ին[35]: Նա հենվում է Թովմա Արծրունու այն հաղորդման վրա, թե Աշոտը մահացել է 29 տարեկան հասակում, իսկ նրա տարիքը պետք է հաշվել հայոց 325

---

[33] **Հովհաննես Դրասխանակերտցի**, *էջ 200-202,* **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն տիեզերական, հրատ. Ստ Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 163,* **Շապուհ Բագրատունի,** *էջ 80:*

[34] **Շապուհ Բագրատունի,** *էջ 83-85:*

[35] **Վարդանյան Վ.,** *Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Ե., 1969, էջ 59: Տե՛ս նաև* **Հակոբյան Թ.,** *Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Ե., 1966, էջ 35,* **Հարությունյան Հ.,** *Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1959, էջ 50 և այլն:*

թվականից (876)[36]: Սակայն, եթե նկատի առնենք, որ 876 թ. ծնված Աշոտ Արծրունին մեկ տարեկան էր դառնալու 877 թ., ապա պարզ կդառնա, որ նրա29-ամյակը լրանալու էր ոչ թե 904 թ., այլ 905 թ.[37]: Այդ է ցույց տալիս նաև պարզ թվաբանական հաշվարկը: Ըստ այդմ՝ նա մահացել է ոչ թե 904 թ. վերջին, այլ 905 թ. վերջին: Այստեղից էլ բխում է մի կարևոր հետևություն՝ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը, որը պետք է տեղի ունեցած լիներ Աշոտ Արծրունու մահից հետո, 906 թ. ավելի շուտ տեղի ունենալ չէր կարող:

Պետք է նշել, որ աբխազական արշավանքից հետո մինչև Յուսուփի 909 թ. ներխուժումը տեղի են ունենում մի քանի կարևոր իրադարձություններ: Մուկթաֆի խալիֆան (902-908) անհնազանդ Յուսուփի դեմ արշավանք է ծրագրում և Սմբատ Ա-ին նույնպես հրրավիրում է մասնակցելու դրան[38]: Այնուհետև տեղի ունեցան Վասպուրականի իշխանների ռազմական գործողությունները տեղի արաբների դեմ և Ամյուկ ամրոցի հետ կապված դեպքերը, ամենայն հավանականությամբ՝ 907 թ., երբ Գագիկ Արծրունին ամրոցը գրավեց, իսկ Սմբատ Ա-ն այն հետ նվաճեց և ապա վաճառեց Գագիկին: Անանունը հաղորդում է, որ դրանից անմիջապես հետո Յուսուփը խալիֆայի կողմից նշանակվեց Ատրպատականի և Հայաստանի ոստիկան[39]: Խոսքը 908 թ. մասին է, երբ Մուկթաֆի խալիֆան մահացավ, իսկ նրա հաջորդը հաշտվեց Յուսուփի հետ ու վերջինիս նշանակեց ոստիկան[40]: Միևնույն ժամանակ՝ 908 թ., տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն: Թերևս հենց Ամյուկ ամրոցի հետ կապված դեպքերի ազդեցության տակ Գագիկ Արծրունին Սմբատ Ա-ին խնդրեց իրեն հանձնել Նախճավանը՝ նույնիսկ ընդունելով իր մեղավորությունը այն կորցնելու մեջ: Արքայի մերժումը Գագիկին մղեց դեպի Յուսուփը, որը նրան ընդունեց գրկաբաց և «հանձնեց» հայոց թագավորությունը[41]: Յուսուփը Գագիկ Արծրունուն հայոց թագավոր կարգեց 908 թ.[42]: Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ Յուսուփի դեմ խալիֆայի կազմակերպած արշավանքից հետո, որին Սմբատ Ա-ն չմասնակցեց, Յուսուփը կարողացավ կարճ ժամանակ անց հաշտվել արդեն նոր խալիֆայի հետ: Այնուհետև նա զորքը հավաքեց և սպասեց մինչև անցնի ձմեռը, որպեսզի գարնանը ներխուժի Հայաստան: Հենց այդ ժամանակ՝ 908 թ., մահացավ Սյունյաց գահերեց Աշոտը[43], որի

---

[36] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 324:*

[37] *Աշոտ Արծրունու մահվան թվականը որոշելիս 905 թ. վրա կանգ են առել* **Ա. Ալպոյաճյանը** *(Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 157) և* **Հ. Ութմազյանը** *(Սյունիքը IX-X դարերում, Ե., 1958, էջ 101):*

[38] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 206:*

[39] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 438:*

[40] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 206:*

[41] *Նույն տեղում, էջ 212:*

[42] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 442:* **Առաքելյան Բ.,** *Երկիրը միավորելու ձգտում և պայքար օտար ներխուժման դեմ (Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1976, էջ 36):*

[43] *Ռ. Մաթևոսյանն այդ իրադարձությունը դնում է 906 թ. (***Մաթևոսյան Ռ.,** *Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990, էջ 83), սակայն Ստեփաննոս Օրբելյանի հիշատակությունն այն մասին, որ նրա մահվանն հաջորդող գարնանը տեղի ունեցավ Յուսուփի*

թաղմանը մասնակցում էր Սմբատ Ա-ն: Անցավ ձմեռը, և մյուս տարվա գարնանը Յուսուփը ներխուժեց Հայաստան: Յուսուփի արշավանքը Ստ. Օրբելյանը դնում է հայոց 358 թ., այսինքն՝ 909 թ.[44]:

Հայ ուսումնասիրողները Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը, որքան մեզ է հայտնի, երբևէ չեն թվագրել: Բ. Առաքելյանն այն տեղադրում է 903-908 թթ. միջև[45]: Վրացի պատմաբան Ի. Ջավախիշվիլին Կոստանդին Գ-ի արշավանքը դեպի Գուգարք, Վիրք և Ալանաց դուռ դնում է 904 թ.[46]: Հայ ուսումնասիրողների անորոշ թվագրումը հարցը թողնում է չլուծված, իսկ Ի. Ջավախիշվիլու նշված թվականը անհնար է, քանի որ, ինչպես ցույց տվեցինք, աբխազական արշավանքը չէր կարող տեղի ունեցած լինել նախքան 906 թ.: Մյուս կողմից՝ դատելով սկզբնաղբյուրներից, Սմբատ Ա-ն Կոստանդին Գ-ի դեմ արշավանքի էր դուրս եկել անմիջապես, այսինքն՝ Կոստանդին Գ-ի ներխուժումը և Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի են ունեցել նույն թվականին: Քննությունը ցույց տվեց, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը պետք է տեղի ունեցած լիներ 905 թ. հետո՝ 906-908 թթ. միջև: Ամենայն հավանականությամբ, Ամյուկ ամրոցի միջադեպը տեղի է ունեցել 907 թ., այսինքն՝ արշավանքից հետո: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ արշավանքից քիչ առաջ Սյունյաց իշխանները լայն եկեղեցաշինական գործունեություն էին ծավալել[47]: Դրա մասին ա-ռավել մանրամասն է խոսում Ստ. Օրբելյանը: Պատմիչն ի մասնավորի անդրադառնում է Տաթևի վանքի մայր տաճարի շինարարությանը, որը սկսվել էր 895 թ. և ավարտվել 10 տարում: Շինարարությունն ավարտվել է 905 թ.: Հետո տեղի է ունեցել Տաթևի վանքի մայր տաճարի նավակատիքը, որին Սմբատ Ա-ի գլխավորությամբ հրավիրվել էին հայոց մեծամեծները: Նրանք գյուղեր և հողեր ընծայեցին տաճարին: Այնուհետև, ըստ պատմիչի, արդեն 906 թ., կազմվեց ընծաների վավերագիրը[48]: Հովհաննես Դրասխանակերտցու և Ստ. Օրբելյանի տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի է ունեցել Տաթևի վանքի մայր տաճարի նավակատիքից (905 թ.) հետո:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի է ունեցել 906 թ.: Դա մի ժամանակաշրջան է, երբ, օգտագործելով 903 թ. սկսված խաղաղության շրջանը, Սմբատ Ա-ն հասել էր իր հզորության գագաթնակետին: Մենք դրանում արդեն համոզվեցինք, երբ քննության առանք այն խնդիրը, թե ինչ երկրներ և իշխանություններ էին մտնում Սմբատ Ա-ի տերութ-

---

արշավանքը Հայաստան (909 թ.), ցույց է տալիս, որ այդ թվագրումը սխալ է: Հ. Ութմազյանը ճիշտ կերպով նշում է 908 թ. (նշվ. աշխ., էջ 102):

[44] **Ստեփաննոս Օրբելյան,** *էջ 184-185:*

[45] **Առաքելյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 34:*

[46] **Ջավախիշվիլի Ի.,** *Հին վրացական պատմագրությունը, Թիֆլիս, 1945, էջ 101 (վրացերեն):*

[47] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 202:*

[48] **Ստեփաննոս Օրբելեան,** *գլ. ԽԱ-ԽԳ:*

յան մեջ և թե ինչպիսի բանակ էր հանել Սմբատ Ա-ն աբխազական Կոստանդին Գ թագավորի դեմ:

АБХАЗСКИЙ ПОХОД АРМЯНСКОГО ЦАРЯ СМБАТА I

ЕГИАЗАРЯН А. С.

Резюме

Абхазский поход царя Смбата I (890-914) имел место в 906 г. после завоевания абхазским царем Константином III (893-929) входивших в состав государства Армянских Багратидов Кахетского княжества и нескольких областей Кларджского царства. В результате похода Смбата I абхазский царь был взят в плен, а армянские войска заняли Абхазское царство, где армянский царь назначил своего наместника. Позднее Константин III признал господство Смбата I и был освобожден. В период абхазского похода в состав государства Армянских Багратидов входили большая часть Великой Армении, Кларджское царство, Грузия, Кахетское княжество и Алуанк до Главного Кавказского хребта.